

ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ

Ե. ԹՈՐՈՍԵԱՆ

ՆԱԽԵՎ ԿԵՐ ՈՐ ԵՒ Է ԳՐՈՒԹՅՈՒՆ


ՊԵՏԷ Է ՈՒՂՂԵՆ ԱՍ

Խմբագր. ԱՐՇԱԿՈՅԱՐ ԲԱԳՐԻ  
ԳԱՅԻՐԷ (Հասցեագրիչ)

Rédaction du journal arménien

ARCHALOUICE

HABBANIEH LE CAIRE (ÉGYPTE)



Լ Ր Ա Գ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Տարեկան, ողջ դարեկն.	60
Վեցամսեայ »	35
ՕՏԱՐ ԵՐԿՈՒՆԵՐ	
Տարեկան Յրամբ	20
Վեցամսեայ »	12

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒՆԸ ԿԱՆԽԿ Է  
ԵՒ ԹՂԹԱՏԱՐԻ ՇԱԽՐԸ  
ԽՄԲԱԳՐՈՒՔԵԱՆԱ ՎՐԱՅ:

Խմբագրութեան ուղղուած  
գրութիւնք եւ չեն տրուիր:

### ՕՐՄԱՆԵԱՆ ՊԱՏՐԻԱՐՔԸ

ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՍԿՂԲՈՒՆԲՆԵՐԸ

(Շար. նախորդ թիւին եւ վերջ)

«Ազգ. ժողովն է որ կ'ընտրէ Պատրիարքը եւ երկու ժողովները, կրօնական ու ֆաղաքական, 14 անդամէ: Այս երկու ժողովները կը նմանին հանրապետական կառավարութեան մը նախարարաց խորհրդին, իրենց գլուխ ունենալով Պատրիարքը. ամենքն ալ Ազգ. ժողովոյ առջեւ պատասխանատու են, որը նոյնպէս նմանողարք, խորհրդարանի մը տեղը կը բռնէ: Ազգ. ժողովը 13 օրը անգամ մը կը գումարուի, հասարակութեան ներքին վարչութեան յատուկ ծրագիրները քուէարկելու եւ Պատրիարքին ու իւր վարչութիւններուն գործառնութեանցը հսկելու համար:

«Պատրիարքը, իւր դահուն վրայ բազմած օրը Մայր Եկեղեցւոյ մէջ կ'երգնու յարգել Սահմանադրութիւնը ու անվթար պահել Սուլթաններէն զանազան թուականներով հաստատուած, Եկեղեցւոյն ու Ազգին առանձնաշնորհումները:

«Արդէն, այս Սահմանադրութիւնը կայսրութեան օրէնքին մաս կը կազմէ. 1860ին Սուլթան Ապտուլ-Ազիզէ հաստատուեցաւ ժողովուրդը ազատելու համար կամայականութիւններէն աւիրուող կոչուած կարգ մը հայ բռնաւորներու, որոնց բեկորները գեռափարակներու երկրին մէջ կը տեսնուին:

«Արդ՝ երբ Պատրիարքը իւր երգումը կը դրժէ կամ հասարակութեան գործերը վարելու անկարող կը գտնուի, Ազգ. ժողովը անոր պաշտօնանկութիւնը կը քուէարկէ:

«Բայց որովհետեւ Վեհ. Սուլթանը կը խորշի ժողովներէ, քանի տարիներէ ի վեր Պօլսոյ Ընդհ. ժողովը գումարուած չունի եւ հետեւաբար Պատրիարքն ալ ուղղակի հրահրութեան տակ չ'է: Այս վիճակը կ'երեւի թէ Օրմանեան Սրբազանը քաջալերած է ուղածին պէս շարժելու: Արդէն՝ երկար ատենէ ի վեր թէ՛ Թուրքիա եւ թէ՛ արտասահման գտնուող հայ հասարակութեան ամեն խաւերուն մէջ խուլ գեղարարութիւն մը կար Պատրիարքին արարքներուն դէմ. երբ վրայ հասնելով Լահէյի համաժողովին ուղարկած մեծագործ հեռագիրը, որուն վրայ կը խօսի Թաւրը իւր 18 սեպտ. թիւ

ուշագրաւ խմբագրականով, վիճակը աւելի ծանրացուց:

«Արդ՝ քանի որ Սահմանադրապէս անկարելի էր գեղարարութիւն յայտնել, ժողովուրդը Եկեղեցւոյն ազատ սկզբունքներուն դիմեց եւ իւր իրաւունքներուն վրայ կրթութեամբ պահանջեց պատարագի ատեն անոր անուան չ'յիշուիլը, ինչ որ կը նշանակէ թէ Օրմանեան Սրբազան արժանի չ'է այլ եւ իւր պաշտօնին: Այսպէս, Ամբրիկայի եւ Պուրկարիոյ, Ռումանիոյ եւ Աղեքսանդրիոյ հայ կրօնական դասը «ժողովուրդի ձայն»ին գլուխ ծռեց, ինչ որ մեր բացատրած սկզբունքներուն համեմատ իրենց պարտաւորութիւնն էր, ու այլ եւս այդ երկիրներուն ու այս քաղաքին մէջ Օրմանեան Սրբազանին անուրը չը յիշուիլ:

«Գահիրէի Եկեղեցականութիւնն է՝ որ քանի մը խորապէս տղէտ անձնաւորութիւններու հետ, անհասկնալի պատճառներով ժողովուրդին բողոքները յայտնելու իրաւունքը չուզեր ճանչնալ, խնդրոյ մը մէջ, որ կը վերաբերի մեր մեծարելի նախահարց ռամկավարական Եկեղեցիին: Եւ այս զուտ կրօնական խնդիրը, շնորհիւ մի քանի տղագէտներու անհեռատեսութեան կրցաւ ներկայացուիլ իբր քաղաքական դաւադրութիւն մը, Գահիրէցիներու խաղաղութիւնը վրդովելու աստիճան եւ մինչեւ արտաքսուած ռժով առաջըր առնելու արժանի:

«Այդ պարոնները պէտք էր որ քիչ մը խորհէին, նախ քան եզրիտական կառավարութիւնը ձանձրացնելէ, որը պահ մը իրեն հաղորդուած տեղեկութիւններուն նայելով դատարկագործներու հետ գործունենալ կարծեց:

«Կառավարութիւնը, չիտակը ըսելով, իւր պարտքը միայն կատարեց: Եթէ յանցաւորներ կան, իրեն տեղեկութիւն տալու համարձակողներն են: Մեզ կը բաւէ միայն բացարձակապէս յայտարարել որ քաղաքական խնդիր մը չէ ասիկա եւ թէ գաղթականները երբեք ամենափոքր արամադրութիւն մ'իսկ չ'ունին սահմանութիւն պատճառելու մեծանձն վեհապետին, երկրի մը ուր՝ խորին երախտագիտութեամբ կը վայելեն աննման հիւրնկալութիւն ու կատարեալ ազատութիւն:»

### Պ Ա Տ Ա Ս Խ Ա Ն

ԱՌ ԱՄԵՆ. Տ. ՆԵՐՍԷՍ ԱՐՔԵՊՍ. ՎԱՐՎԱՊԵՏԱՆ

ՆԱԽԿԻՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՇԱՅՈՑ

Ձեռամբ Հաճի Պետրոսի Առաքելոյն

ի վերին Սրուաղեմ

Ես՝ Մամբրէ խոնարհ ծառայ Բրիտանոսի, անխմանալի կամօքն Աստուծոյ եւ ձեռնադրութեամբն կապուածի վարդապետի՝ բազմամօրուս քահանայ, եւ բարձր հաճութեամբն մենծ աղաներու՝ Փոխ-Տեղապահ Առաջնորդական Աթոռոյն՝ որ ի Գահիրէ, տամ Բրիտանոսաւանդ ողջոյն առ երանաշնորհ մեծդ Ներսէս, նախկին Պատրիարք Կ. Պօլսոյ:

Բանի մ'օր առաջ հանդերձեալ աշխարհէն զրկած կոնգակը կարգացի, որուն մէջ դժգոհութիւնը կը յայտնես տեղուայ ազգային գործոց մասին բռնած ընթացքին դէմ: Հիմայ որ քու աստիճանական վաստակոցը եւ գործառնութեանց հաշուեկալքը բրած եւ մէկ կողմ քաջուած ես, խոշոր խոշոր կը շարգես եւ կը հրամայես որ ժողովուրդին կամքը յարգելու ու Օրմանեանին անուրը չը յիշեմ պատարագի ատեն Ասոր համար ալ խել մը յանդիմանական խօսքեր ուղղած ես ինձ: Ե՛հ, ժողովուրդին գոռումն ու աղմուկները, կարծես, քիչ էին եւ անա տարիներու երկար լուծեմէ վերջը գու ալ երկր սրբալու կրնես Սահայն լաւ գիտցիր թէ ես ատանկ յանդիմանութիւններէ, սաստեքէ վախցող մարդ չեմ. այս մօրուքը շատ վարդապետներ, եպիսկոպոսներ տեսած է . . . :

Բանի որ ինձ թիկունք ունիմ տեղուայ մենծ աղաները, եւ զօրավիզ՝ ոստիկանները, ես յումմէ՞ երկեայց, քանի որ Օրմանեան Պատրիարքն է ինձ պաշտպան եւ վարձատրող, ես յումմէ՞ դողազայց: Ես եմ որ արդ իշխեմ՝ վերին, Միջին եւ Ստորին Եգիպտոսի (Աղեքսանդրիոյ ըմբոստ հայերը զատապարտած եմ իրենց քաղաքին մէջ բանտարկուած մնալու): Ձփռոս իմ ոչ տամ այլոց, եւ ոչ իսկ Յակոբ Աչոտ եպիսկոպոսի: Իմ է Չակազիկ, իմ է Մանուէրա եւ Պէնի-Սուրէն: Ես եմ, ե՛ս որ հանից (իմա՝ աքսորել) յեգիպտոսէ զօրգիս քո թորգումաղինս, ես եմ որ ամեմ ապտակս յալ եւ անեակ եւ տամ հրամանս կապելոյ, եւ արձակելոյ . . . ի բանտէ:

Կուզե՞ս որ քու հասցէիդ ալ զրկեմ հոտ քանի մը ոստիկան: Վալլան . . . (հոս քրդերէն խօսքեր կան ըսուած զորս չկրցի հասկնալ):

Ո՛ւր էիր մինչ ես զհիմունս արկանէի Պէնի-Սուրէնի եւ անդ հաստատէի զպատուանդանս թոռոյ իմոյ Փոխ-Տեղապահի . . . :

Անցա՛ն, շատոնց անցան ալ այն հին ժամանակները, յորում դարիպ քահանային վիճակած չիլին քաջեցի ի Պօլսոյ կը յիշե՞ս. երբ Մուշէն առաջին անգամ Պօլսոյ եկայ, զիս իսկոյն զրկեցիր Պալքիլի գերեզմանատունը՝ իբր երկրորդական օգնական մը Գարբիէլի: Հոն մինչեւ երկուց երկուեցի, մինչեւ իսկ Բառսուեցի մեռել օրհնելով եւ թաղելով անցուցի երկար ատեն Ամիսներ, տարիներ անցան, եւ ես մեռելոց այդ դաշտը պաշտօնս շարունակեցի: Ոչ դարիպին, աղքատին թիւը կը պակսէր, եւ ոչ ալ Պալքիլի խորունկ փոսերը կը լինային . . . : Մէկ խօսքով ես քաղեմ ձանձրացայ, իսկ Գարբիէլ հրեշտակ հըն-

ձեռքն չը յոգնեցաւ: Մանաւանդ պիշեր մը երազիւ մէջ երեւցան ննջեցելոց ուրուականները եւ սաստիկ արտունջ յայտնեցին ինձ դէմ որ իրենց յաւիտենական քունը կը խոտովէի իմ երկար ու բարձրաձայն աղօթքներովս, «հոգոցներովս»: Մտածեցի որ հաս ու բարակ մէկ զին է, ուստի կարճատեղեցի, սակայն ինձ տաղակալի դարձած էր այլ եւս այդ կեանքը: Ուստի որ մը ծրարս կապեցի եւ լոկի մնչիկ կծիկը զրի եւ Փարաւոններու երկիրը եկայ հաստատուիլ: Իրաւ է թէ հոս ալ պարտաւոր ենք մտնել թաղել, սակայն այս տեղի սակայինը շատ բարձր է, բիացան վեր է. ասկից զատ տուն օրհնէք եւ ժամուց ալ կան:

Արդ այս վիճակիս մէջ ի՞նչպէս մենք աղաներուն խաբրը կտարեմ ու անունը չը յիշեմ Օրմանեան Պատրիարքին, որ գեռ նոր ծաղկեայ փրկուն մը զրկեց եւ կը յուսամ թէ մօտ ատենէն ալ օրհնութեան կոնդակ մը զրկէ, մինչդեռ դուն քիթը ծակ զոյգ մը հողաթափ իսկ չես տուած ինձ: Այս նկատումներէն զատ ուրիշ կարեւոր պարագայ մ'ալ կայ, որ խոստովանաբար քեզի կը յայտնեմ. լեզուս ու ականջս ա'յնչպիսի յիշելիքի, յիշեալ լիցիքի վարժուած է որ ատենց բացասական մէկ ձեւը եզոզ «չը յիշուի» բառը ականջիս շատ խորթ կը հնչէ, մանաւանդ կը վախնամ որ օր մը յիշելիքի դէմ ալ նոր բանաձեւ մը կառաջարկուի:

Դուն որ այս անդամներուն այդչափ երես կուտաս, զրուշացի'ր: Օր մը երբ հող գալու ըլլան, քու ալ սրբիկդ կ'աւրեն, եւ ըստ արամազրութեան Յիւզ կամ 150րդ յօդուածի Սահմանադրութեան՝ ըսելով խնդիրներ կը յարուցանեն քեզի դէմ: Մենք անոնցմէ մաս մը Պէնի-Սուրէնի պարիսպներէն դուրս հանեցինք ու նորէն օձիքնիս չկրցինք ազատել ձեռքերնէն:

Այս խռովայնութեան անանկ աչքերնիս վախցած է որ անցեալները խառն ժողով մը գումարելով խելք խելքի սուրբ եւ Մարմինայի գերեզմանատան մէջ անոնց թաղը պատու մը դատեցինք մերիններէն, որպէս զի յառաջիկային մեր եւ մերայնոց խաղաղ քունը չվրդովեն իրենց անվերջանալի վէճերովը:

Ինձ կը հարցունես թէ երբ հող գալու ըլլամ ի՞նչպէս հաշիւ պիտի սամ եւ ի՞նչ պիտի պատասխանեմ: Զիս ա'յդչափ անհող ու անմիտ կը կարծես ուրեմն որ պէտք եղած նախահող պատրաստութիւնները տեսած չըլլամ: Ես հիմակուց հաշիւս այնպիսի վարպետութեամբ մը կարգադրել տալու կ'աշխատեմ որ հաշուեկէիքը եղած աստի պարտքիս կողմը բաց չպիտի երեւի:

Բովս ունիմ ճարտարի քարտուղար մը որ ամէն տեսակ մուրհակներ յօրինելու, անոնց վաւերական ձեւ մը տալու մէջ շատ վարպետ ու ձեռքնաս է:

Եթէ գիտնայի'ր, շատոնց հող կը կանչէիք, եւ այդ տեղի միւլիք, վախրձի խնդիրները ուղածուդ պէս կը կարգադրէր, միայն թէ «ցըն-ծացուք»ը լաւ երգելու է . . . :

Արդ՝ ես չէ թէ տարաբարուն, այլ երանելեաց օթեւանին մէջ օտար սուճալը տեղ մը պիտի գրաւեմ. երբ վաւերաթղթերս ի ձեռքին ներկայանամ, պիտի տեսնես այն ատեն:

Թո՛ղ թէ անանկ շուտ գալու միտք ալ չունիմ բնաւ: Իսկ եթէ մեր նախկին գործակիցը իւր անհաճոյ ներկայութեամբը զիս անհանգիստ ընելու ըլլայ, Աստուած ողորմած է: Գովս ունիմ այժմ քաջարի պահապան մը որ իբրեւ կերակրիկ հսկէ շուրջս ցորեկ ու գիշեր: Ուստի եթէ երբեք նորին վաւերութեանը՝ Գաբրիէլ հրեշտակապետ ինձ մօտենալու ըլլայ, հաւատա' խօսքիս, մօրուքս վկայ, իսկոյն շղթայուած Մանուէր փաշայի բանասր ինքզինքը պիտի գտնայ: Արդէն Պալքէլը մեր գործակցութեանն պղտիկ թերհայել մ'ալ ունիմ իրեն հետ կարգադրելիք:

Զիս կը մեղադրես թէ այդ տեղ անցած դարձածներէն ամենեւին տեղեկութիւն չունիմ, ապա թէ ոչ այս տեսակ բաներ բնաւ չպիտի ընէի: Ակնհայտ կը տեսնեմ թէ Գու ալ հոստեղի դարավերջիկ փոփոխութիւններէն տեղեկութիւն բնաւ չունիմ: Այն քու օրից բարի ժամանակները շատոնց անցան. հիւսայ մինչեւ իսկ Աւետարանի ինչ ինչ խօսքերը փոխած ենք ժամանակին եւ միջավայրին պահանջման համաձայն: Կ'ուզե՞ս պղտիկ վաղափար մը ունենալ, ահա մի

երկու նմոյշ «Ես եմ հովիւ քաջ, հովիւ բարի որ մասնեմ զոչխարս իմ ի ձեռս ոտտիկանի»: Ուրիշ օրինակ. «Գրեալ է թէ որ ասիցէ ցեղբայր իւր մորտ, պարտական լիցի գեհեհի. բայց ես ամեն ամեն ասեմ ձեռ, ո՛ր որ ասիցէ «չիշուի» անդէն արկցի ի բանս Մանուէր Փաւայի» եւլն. եւլն:

Ալ կը վերջացնեմ նամակս որ բաւական երկայն եղաւ: Օ՛ր ուրեմն, քեզի համար տանկլոս «հողոց» մը ըսեմ կ'ողորգուիր ու հաշտուինք այլ եւս:

«Հոգուցն հանգուցելոց, Քրիստոս Ասուած, արա՛ հանգիստ եւ խափուեա՛ զձայն ճոցալի մանական, եւ ինձ՝ մեղաւորիս ընտրեա՛ զարձոն սեղապահական»:

Մնամ աղօթակից եւլն. եւլն.  
Ընդօրինակեց  
ՕՄԵՂԱՅ

### Ա.ԶԳԱՅԻՆ ԼՈՒԻՐԵՐ

Կիրակէ օրը տեղույս Ս. Աստուածածին եկեղեցւոյն մէջ «չ'իշուի» խնդիրը լուծուելու ճամբուն մէջ մտած է շատ գործնական եղանակաւ մը: Պատարագիչ քահանայն Տէր Մամբրէ, (որ խռով սրտով ալ կրնայ պատարագել) «եւս առաւել» աղօթքի մէջ երբ կը յիշատակէ ամենայն Հայոց Հայրապետն ու երուսաղէմի Պատրիարքը, ժողովրդեան մէջէն առանց թոյլ տալու որ յիշատակութեան խնդիրը առաջ տարուի եւ հայ ազգին ատեղի Օրմանեանին անունն ալ յիշուի, կ'սկսին երգել «Գոհութիւն»ը ծայրէ ի ծայր, սրուն մէջ այլ եւս չեն յիշատակել իրենց չ'սիրած Պատրիարքին անունը:

Գալտեան վարժարանի մասին ժողովրդական խաւերու մէջ խօսուած է անկէ մեզ հասած լուրերը հետզհետէ անախորժ համեմատութիւններ կ'առնեն:

Աշակերտաց յառաջդիմութեան նկատմամբ բռնուած անհող ու անտարբեր ընթացքի վերաբերեալ մասը չէ միայն, որով պէտք է զբաղիլ. դեռ ուրիշ շատ բաներ կը պատահին եղբր վարժարանին մէջ:

Երբեմն ներքին պաշտօնէից կողմէ ծրուողները կը թեւադրուին իրենց վաւակները վարժարան չ'ըրկելու:

Երբեմն ծնողք մը իւր դժգոհութիւնները կը հաղորդէ առ որ անկ է եւ անլըսելի կը մնայ:

Երբեմն հողաբարձու պէյնն եւ վարժարանի ծնորէնին մէջ աննշան վէճեր տեղի կ'ունենան լուծեան մէջ . . . :

Երբեմն տնօրէնն եւ վարժուհի, որ ամենէն աւելի քննադատելին է, բարձր ձայնով եւ անպատշաճ բառերով զիրար կը նախատեն: Չենք հաւատար թէ այս դէպքերը աշակերտաց առջեւ տեղի կ'ունենան. բայց կրնա՞նք վստահ ըլլալ թէ ծնողներ իրենց տունին մէջ այս նիւթերուն վրայ խօսելու ատեն պէտք եղած զգուշութիւնները ձեռք կ'առնեն, որպէս զի իրենց զաւակները տեղի ունեցած խօսակցութեանց անգիտակ մնան եւ դատատուներուն վարկը չ'կտորի իրենց աշակերտաց առջեւ:

Երկուքէ աւելի տարիներ է ի վեր Գաղաք ժողովը տիրող այս խառնաչփութութիւնները խաբեր համար նկատողութեան չառնելով, ուրիշ օգուտ մը չ'կրցաւ արտագրել բայց եթէ պաշտօնեաները պէտք է

զածէն աւելի քաջալերել ուղածնին ընելու համար եւ ազգին դրամներն ալ յուճկէստ վատնուելու պատճառ դառնալ:

Կը հաւատանք թէ այս անգամ Պատրիարքը ժողովը առանց իրեն բացակայ անդամոց վերադարձին սպասելու՝ գործնական միջոց մը ձեռք կ'առնէ այս անպատեհութեանց առաջը առնելու համար: Որովհետեւ կրնայ պատահիլ որ մինչեւ անոնց վերադարձը խնդիրը շատ աւելի ծանրանայ եւ այն ատեն հարկ կըլլայ իրեն հետ զբաղեցնել Պատկ. Երեւոյ. ժողովը ալ որ արդէն շատ զբաղած պիտի ըլլայ իրեն պակասեալ անդամոց տեղ նորերը ընտրելու, Սահմանադրութիւնը գործադրելու, Առաջնորդի ընտրութիւնը կատարելու եւ ատենց նման այլ եւ այլ կարեւոր գործերով . . . :

Կը լսենք թէ վարժարանի հողաբարձու պէյնն դէմ իւր գանգատները հրատարակութեան սուող աշակերտը, Տնօրէնին կողմէ ճամբուած է վարժարանէն, առարկուելով թէ հողաբարձու Պէյի ստորագրութիւնը կրող թուղթ մը պէտք է ներկայացնէ, վարժարան ընդունուելու համար:

Այսպիսի վարմունքի մէջ մեր աղաներու եւ անոնց երախտարողներուն բռնած ընթացքին վրայ չենք զարմանար, վասն զի անոնք փոխանակ ճշմարտութիւնները երեւան հանել ջանալու, կը ջանան խեղդել ա'յն ձայնը, որ ճշմարտութիւնը խօսելու կը համարձակի:

### Թ Ա Տ Ե Ր Ա Կ Ա Ն

Քաղաքիս հայ դերասանական խումբը քանի մը արուեստասէր (amateur) երիտասարդներու ընկերակցութեամբ, կիրակի գիշեր ներկայացուց ողբերգակ-բանաստեղծ վաղամեռիկ Պ. Գուրեանի Սեւ Ղժժե՛րը:

ՊՊ. Պէյնեանք, ինչպէս միշտ, սոյն խաղին մէջ ալ յաջողութեամբ կատարեցին իրենց դերերը:

Պ. Շաւարշ կոյր զօրապետի դերը խիստ արտառուչ եւ բնական կերպով կատարեց, այնպէս որ ներկայները յարտասուս շարժեցան:

Տիկին Մարի Պէյնեան անգամ մը եւս ցոյց տուաւ իւր ճարտար դերասանուհի տաղանդը եւ ներկայներէն շեղձ ծափահարութիւններ խլեց:

Իսկ փոքրիկն Արթինէ հիանալի էր պարզապէս՝ իր մանկուտակ բնական ձեւերով ու խօսուածքովը:

Եթէ գիտողութեան արժանի կարեւոր կէտ մը կար, այն ալ դերասաններու, հայերէն նախադասութիւններ արտասանելու մասին ցոյց տուած ակներեւ դժուարութիւնն էր եւ այդ թերութիւնն ալ անշուշտ առաջ կուգայ երկար տարիներ օտար լեզուով (միայն թուրքերէն) ներկայացումներ տալէն:

Ասոր յանցանքը պէտք է վերագրել հայ ժողովուրդին որ չ'գիտեր քաջալերել իւր արուեստագէտները, որպէս զի յաճախ հայերէն ներկայացումներ տան:

Կիրակի գիշերուան ներկայացումն ոչ միայն քաջալերական եղած չէ այլ

և շատ փոքրիկ, գրեթէ աննշան հասոյթ մը արտագրած է:

Այսպիսի զուտ ազգային ներկայացումի մը մասին Գահիրէի Հայոց ցոյց տուած անտարբերութիւնը կրնայ մեզ պարզելի համարուիլ: Այս վիճակին մէջ գերասանական խումբը ինչպէս համարձակի հայերէն լեզուա թատերախաղեր ներկայացնելու: Ցաւալի է տեսնել որ տեղւոյս ազգային քաւելի ասորժ կ'զգան Այաքիսի, էրսորատի մէջ որովայնապարեր գիտելէ, քան թէ ազգային պատմական մեծ գէպքի մը ներկայացման հանգիստես ըլլալէ: ասիկայ մեզ Հայոցս պատիւ չ'բերեր:

### ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Կ. Պօլսէն Թալալի կը գրեն թէ սեպտ. 28ին հինգշաբթի օրը Երլազ Գէօզլի Ալպանիացի երկու պահապաններ ըզվօլվէրի հարուածներ արձակած են՝ Սուլթանը իւր պալատին պարտէզներուն մէջ պտոյս մ'ըրած միջոցին: Գնդակներէն մին Սուլթանին խիստ մտէն անցած է:

Գննութիւն մը հաստատած է թէ պահապանները ո՛ր է է չարամիտ նպատակաւ չէին պարպած իրենց զէնքերը:

—Գարձեալ հոկտ. 3 թուականով Պօլսէն կը գրեն:

Երեք գեսպաններ առջի օրը իրենց պահակախումբը նստելով մեկնեցան աստի-Գերմանական գեսպանը՝ Չմիւռնիա և Անգղիականը՝ Արշիպեղազոս, իսկ Գաղղիական գեսպանը Աթոս լեռը պտոյս մ'ընելու:

—Հայկական խնդիրը սուսմասիւրելու համար Երլազ Գէօզլի մէջ ի նիստ գումարուող յանձնարումը Անատոլի բոլոր նահանգներու կուսակալներուն հեռագիրներ ուղղած է հրաւիրելով զիրենք որ քաղաքական յանցանքով բանտարկուած հայերէն ներման արժանի եղողներուն ցանկը պատրաստեն, նոյնպէս վերջին գէպքերուն ատեն Հայոց քանդուած եկեղեցիներուն, գարոցներուն, վանքերուն, որբանոցներուն եւ ապաստարաններուն թիւը յայտնող ցուցակը շինեն:

Յանձնարումը տակաւին բանտերուն խորը մնացող հայերուն ներման մասին, ինչպէս նաև վերոյիշեալ ցուցակին մէջ նշանակուելիք հաստատութեանց վերաշինութեան նկատմամբ իւր առաջարկութիւնները Սուլթանին պիտի ներկայացնէ:

Առ այժմ սակայն առնուած մասնաւոր լուրերու նայելով՝ Աեքաստիոյ, Վանի և Մուշի կուսակալութեանց մէջ խռովութիւններ ծագած են: Աեքաստիոյ կուսակալը վիրաւորուել է, խեղ մը հայեր ջարդուել են:

—Փանսախիսի պատմասն. Գասթէօրեան հաստատութենէն խումբ մը գիտնականներ Փորթուկալ զրկուած էին այնտեղ ժանտախտի յատկութիւններն ուսումնասիրելու համար. այդ խումբն Օփորթոյէն մեկնելու է Փարիզ գալու: Բոլոր այն հիւանդներն, որոնք Փասթէօրի մեթոսով խնամուած են ազատած են այստէն: Թուի թէ Տ. Երսէնի պատուաստը վերջնականապէս կը յաղթէ այդ սարսափելի հիւանդութեան:

գութեան: Այդ խմբի պետն Տ. Բալմէթ, փափաք կը յայտնէ որ ժանտախտին սկսած ժամանակ հաստարակութիւնը պատուաստուի, որպէս զի անոր առաջխաղացութիւնն արգիւտէ:

### Ի Թ Ր Ա Ն Ս Վ Ա Ա Լ

Տասն և վեցէն մինչև վաթսուն տարեկան եղող բոլոր այդ մարդիկ գէպ ի սահմանադրուի կը մեկնին: Երեսփոխանները, գատաւորները, փաստաբանները, գործադիր ժողովոյ անդամները, կառավարութեան բարձր պաշտօնեաները, Գրիւկէր նախագահին որդիներն ու թոռները (թուով ութը) այդ խումբերուն մէջ կը գտնուին:

Գանի մը ժամուան մէջ զօրքերը շարժման մէջ դրուած են:

Հայերը պիտի պատերազմին իրենց որդուցը ճիշտ քովը: Կիները ըսած են այբերուն. «Լաւագոյն է մահ քան թէ պարտութիւն»: Տենդոտ հայրենասիրութիւն մը կը ախրէ ամէն կողմ: Սրտայոյղ տեսարաններ տեղի կ'ունենան. կին մը՝ որ իւր չորս զաւակներէն միանգամայն կը բաժնուի, լաւ կուռելու կը յորդորէ զիրենք:

Լծնտօնի թերթերուն բոլոր պատերազմական թղթակիցները կ'ըսեն թէ նախապի սահմանադրուի վրայ ապահովապէս 20,000 հոգի կայ՝ լաւ պարենաւորուած և զինուած: Պիտի կրնա՞ն ասոքօք զանոնք պրսպել ո՛չ, կը պատասխանեն անգղիացի թղթակիցները: Բայց՝ Բարեյոյսէն հասած լուրերը կը հաւատեն թէ իրենց խոհմութիւնը և խղճամտութիւնը ետ պիտի կեցընեն զիրենք նախայարձակ ըլլալէն, որ պատերազմը անխուսափելի պիտի ընէ:

Սահմանադրուի վրայ Պօլսէնը զոհ համարումը կը շարունակուի:

Հանքերու քննիչը (քօմիսէր) Սոհաննէսպուրի մէջ գտնուող անգղիացի հպատակները հրաւիրած է կարելի եղածին չափ շուտով քաղաքէն մեկնել:

—Թրանսօլաւի կառավարութիւնը գրաւել է Քէրթանի փոխադրուող կէս միլիոն ոսկին: Նոյնպէս Բարեյոսոյ գաղութի երկաթուղւոյն վերաբերող 400 հար յիսկօն վար գրած է:

—Պ. Հօֆմէյըր կը ջանայ Թրանսօլաւէն խոստում առնել թէ Պ. Միշէրի ի սկզբանէ բրած առաջարկները կ'ընդունի:

—Հարաւային Ալիւրիէի մէջ կացութիւնը փոխուած չէ:

Թրանսօլաւի կառավարութիւնը խրստիւ արգիլած է Պօլսէնի Բրիտանական կառավարութեան հօլը անցնելէ:

—Գրիւկէր նախագահին քով ազգացութիւն կը բանեցնեն, որպէս զի յարձակողականի սկսելու հրաման տայ, բայց նա կը մերժէ:

### Թ Ղ Թ Ա Կ Յ Ո Ի Թ Ի Ի Ն Ն Ե Ր

ԱՂԵՔՍԱՆԴՐԻԱ, 7 հոկտ. 99

### Հ Ա Ռ Ա ' Չ, Մ Է Ջ Ա ' Թ

Ազգապատկան հողերու վաճառումը սկսած է. հառա՛ջ, մէզա՛թ: Աղեքսանդրիոյ Երուսաղէմապատկան հողերու կարեւոր կողմերէն մէկը ա-

ճուրղի ելած է այս պահուս. 10,000 քառակուսի մէթրէն աւելի կը հաշուուի վաճառելի հողը: 25,000 ոսկի տրուած է արգէն բայց մերժուած է Երուսաղէմի վազ Գնէրու միւթէվէլիին կողմէ. մեր քառակուսի միւթէվէլիին 35,000 կուզէ եղեր. իր միջնորդէքը քանի՞ կըլլայ արդեօք:

Երբեմն այդ հողը շէն ու չիբին պարտէզ է եղեր. այսօր դարձեր է դառն աւերակ, չնորհիւ բարիխիղճ միւթէվէլիներուն. երբեք այս մարդիկը կը մտածեն թէ Հայու սիրան ալ աւերակ է, պէտք է պարտէզներն ու տուններն ալ աւերակ ըլլան, գոնէ Երուսաղէմապատկանները, որովհետեւ իրենց տուն ու պարտէզը սիրան ու կեանքը շէն է, ալ ինչիւրն ո՛ւն պէտք ազգապատկան հողերուն բարեգարգութիւնը: Ինձմէ շատ աւելի հասակաւորներ և չին գաղթականներ այդ հողին վրայ երբեմն 400 արմաւենիներ հաշուեր են, այսօր ևս երկու հազար գտայ միւսակ, անոնք ալ անբեր ու ընկնելու չափ ծած: Ինձ՛ղճ պարտէզ, ո՞վ անիծած կը լինի քեզ արդեօք, որ բոյր պարտէզին սեղն աւեր, անապատ է շուրջ պատեր այսօր: Կ'ըսուի թէ իր շէն օրերուն մէջ 500 ոսկու մօտիկ տարեկան հասոյթ մը կուտայ եղեր, այսօր հինգ փարա չարապարիւր: Ի՛նչ համեմատական հաշիւ. եւ արդէն մեր ո՞ր կալուածը իր հին օրերուն փառքին մէջն է, քանի թագաւոր փաշան մուսած է. այդ խտապահանջ մարդուն շատաչող մտրակը այսօր պէտք էր, որ կալուածները իրենց արդիւնքը տային:

Եթէ օրին մէկը Երուսաղէմը սխալուելով հաշիւ պահանջէ այդ հողի միւթէվէլիի ազալէն, մենք վստահ ենք որ մեր քառակուսի մարդուկը հետեւեալ արտադրութեանց զանկը պիտի ներկայացնէ Երուսաղէմին, որը մենք իրմէ առջ ազգին կը ներկայացնենք: —2 անպտուղ արմաւենի դեռ կանաչ վիճակի մէջ. —7 կտորած արմաւենի բուն. —3 վայրի թղթիւր, —5 սկակ թուղի ծառ. —9 վայրի գանաղան թուփեր, որոց մէջ ըզտափուշն ալ իր եղջիւրը տնկելով կը պատուէ մեր ազգայինները: Այդ պարտէզը 12 տարիէն աւելի է որ գիշերը փողոցները թափառող շուններուն իբր պանդոկ կը ծառայէ. արդեօք տեղը չէ՞ հարցնելու թէ Երուսաղէմայ տուններուն ու կալուածներուն վերակացուն շուններէն ստացած պանդոկի այդ վարձքը անցուցած է Երուսաղէմի հաշուին. մեր այդ պարտէզը այսչափ շունի ու կատուի սերունդ մը հասցնելէ վերջ ամեն օր ալ հաղաբարձոր երթեկող չղջիկներ ու հարիւրաւոր «Երուսաղէմ», Երուսաղէմ . . . » վայրը բոռ բուեր ու բուծակներ տեսած է և կը տեսնէ: Ու դեռ ինչն'ը . . . : Ասոնցմէ դուրս դեռ դիտէ՞ք ինչ բանի կը ծառայէ. չըջակայ խանութներու կոյսնոց ու կղկղանոցն է: Զեպալիներու աղբանոցն է ու եթէ բանք Աղեքսանդրիոյ եկեղեցւոյ ժողովական ազաներուն թիւին տակ ամեն վայրկեան բուրող արտաքնոցն է՝ ամենանճիշտ կը լինի, այդ աղբուքը քրքրող մեր Երուսաղէմի այս աւուր խորագները դիտէ՞ք անկէ ինչ պիտի գտնեն վաղը, 35,000 քերտաւ ոսկիներ . . . :

Խաչվերացի կիւրակէ օրը Յակոբ Եպիսկոպոս հանդերձեալ էր պատարագ մատուցանելու. չարալ թագով, դաւազանով փառաւորապէս պատարագելէ վերջ, խաչի վրայ փառաւոր ալ քարոզ մը խօսեցաւ, ուր վրան դոց տեսակէն ակնարկութիւններ ալ ըրաւ այսօրուայ Արմէնի Երուսաղէմի հողերուն չեղոթեան վրայ և Հայ ազգի յոյժը հրաւիրեց խաչին վրայ խաբարելու ըստ իս աւելի լաւ կը լինէր, որ մեր այդ օրուայ բացառաբար ողբերուող քարոզիչը, ո՛չ միայն խաչը ցոյց տար փրկարար, այլ անոր հետ հիւսէր և սուրի ճառը ինչ որ է, մենք դարձեալ գո՛հ ենք որ այդչափն ալ խօսեցաւ և ոչ միայն խօսեցաւ, այլ յիշատակութեանց ատեն Օրմանեանի անուան վրայ խոչոր նրզզգ... մը քաշեց և ջնջելով անցաւ (Օրմանեանի ակնաջը չի հասնի սակայն): Արդեօք եթէ Գահիրէ ըլլար պիտի ընէ՞ր այդ բանը. այդ մեղք՛ ինչ: Մենք պէտք է գովենք Եպիսկոպոսը իբր մեղձ ժողովրդի զաւակներու հետ է. երբ անցնի մենծ ազաներուն կողմը այն ատենն ալ կը պարսուենք: Գահիրէի ազաները նայինք ինչ պիտի ընեն Աշոտ Եպիսկոպոսին, պաշտօնանկ ըրած են, բայց մօ-

րուքն ալ նայինք կրնան անիւր վահրամ Հայր Առաքին մօրուքը անիւրու սպանալիքն ըրած էին ժամանակաւ, բայց անիւր փառաւոր ապստակ- պատասխան մը ստանալէ վերջ, այսօր ալ այդ Աստուծոյ մարգը ոչ միայն մօրուքէն զրկուած չէ, այլ կարծես Գահիրէի աղաները ճախեցնելու հա- մար Օրմանեանը չը յիշելու օրէն սկսեալ երկու մաս ալ աւելցուցած է մօրուքին վրան Ահա թէ մենք վարդապետներու ինչը կը գովենք, եւ ինչ կը պահանջենք անոնցմէ: Մոյլ ծայլ չի քննալ ամբողջ Աստուծոյ օրը, ժողովրդին մէջ մտնել. գոնէ Դանիէլ Հայր Առաքը իրենց օրինակ, որ միշտ շարժման մէջ է, ժողովուրդին մէջ է, երբեմն խանութները կը վազէ, տուները կերթայ չկը մը- խիթարէ, սիրտ կուտայ ու եթէ ալ բան չի գրու- նէ, ազգաբնիկ մը համար յաշուած լոթուրի մը թուղթը կը քալեցնէ խանութէ խանութ, տու- նէ տուն եւ կ'ատրպէ որ բաժանորդ գրուին, ա'յ ձեզ շարժուն կեանք. ահա ձեզ վարդապետ որ Եկեղեցին վարդապետ դուրսն ալ հարապէս կը դառնայ, ու մեզ ա'յն է պէտքը:

ՊԱՊԻԿ ՃԳՆԱԻՈՐ

ՀԱՅ ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ Ի ԳԱՀԻՐԷ

ԵՐԵՎԱՆԻ ԲԱԾՆՈՒԹՅՈՒՆ

ՄԱՆՁԵՐՈՒ, ԱՂԶԿԱՆՑ ԵՒ ՄԱՆԿԱՊԱՐՏԻՋԻ

Մանչերու դպրոցը կը գտնուի Անգղիացոց վարժարանի շէնքին մէջ Ի Պապէ-Սալք:

Ազգայնաց եւ Մանկագարտիկ համար զատ տուն մը յատկացուած է, որ կը գտնուի Ի Հօշ-էլ-Շարգալի, Տալուտի:

Փորձառու ուսուցիչներու միջոցաւ պիտի աւանդուին Հայերէն, Անգղիերէն, Ֆրանսերէն եւ Արաբերէն լեզուները:

Մասնաւոր հոգածութեամբ ուժ պիտի արուի Անգղիերէնի:

Մանկապարտէզի համար պատրաստ է մասնազէտ եւ փորձառու վարժուէի մը եւ մանկապարտիկի վերջին մէթոտներով ու դրութեամբ պիտի կրթէ մանուկները:

Մանրամասնութեանց համար դիմել, Տիար Հանի Փրիլպպոս Ենդուպեանի Ի Մէնչիէ: 15-15

ՀԱՅՎԱԶԵԱՆ ՓՈՒՈ

Օտ օգտի Պալ վանաւասան մօտերը, Կամե-էլ-Պեհարի ճիւղ գիմացը

ԵԿԱԽՕՅ ԵՒ ԸՆԿ

Պատիւ ունի յայտարարելու թէ, վերջերս իրենց նոր բացած փուփն մէջ, անխարդախ աւելբէ կը պատրաստուի ԳԱՂՂԻՍԿԱՆ, ԱՆԳՂԻՍԿԱՆ, ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԵՒ ՅՈՒՆԱԿԱՆ հացեր: Սուրճի թէյի եւ կաթի պարսիմաթներ, եւայլն:

Եկաւօֆ եւ Ընկերութիւն մեծ ջանք եւ հոգածութիւն պիտի ունենան իրենց դիմող բոլոր յաճախորդներն ըստ ամենայնի գոհացնելու:

Թանձնարարութիւնք ամենայն ճշգրտութեամբ եւ փութով կը կատարուին: 5-50

ՏԻԿԻՆ ՄԱՐԻ ՊՕՂՈՍ

ՄԱՆԿԱՐԱՐ

Վկայեալ տեղական կառավարութեան եւ բժշկական վարժարանին

Իւր բնակութիւնը հաստատած է Ի Շարա Ապստի-Ազիզ, Ալի փաշա Շէրիֆի պարտիզին դիմաց:

Երկար ժամանակ իւր արհեստին կիրարկութեամբ ստացած փորձառութիւնը եւ տեղական կլիմայի պահանջներուն մասին ունեցած գիտակցութիւնը կարեւոր առաւելութիւններ են:

Իրեն դիմողները կատարելապէս գոհ պիտի մնան: 8-24

ԼԵՒՈՆ ԿԻՒՄԻՏԵԱՆ

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԵՄԱՅՈՅՅԵՐՈՒ

ՍՈՆՕՎՐԱՍ

Գ.Ա.ՀԻՐԷ, - Մուսի փողոց, - Գ.Ա.ՀԻՐԷ Ս. ԵՒ Ս. Ահեմալիի վաճառասան դիմաց

Վերջերս հաստատած իւր վաճառատան մէջ կը գտնուի պատի եւ քծնայի ընտիր տեսակէ բանտիւններու մեծ մթերք:

ԴԻՄԵՑԷ՛Ք ՀՈՆ եւ պիտի գտնէք ամէն ճաշակի յարմար զանազան տեսակ արանց եւ կանանց ժամացոյցներ, աղամանդազարդ, ոսկի, արծաթ եւ ցիւրի:

Ֆրանսական եւ ամերիկեան ապրանք ամենաբնորոք տեսակներէն զարդեղէններ, շոքրաներ, օղի, մասանիներ եւայլն:

Ամէն տեսակ ժամացոյցներու նորոգութիւն կը լինի, արհեստին կատարելագործութիւններուն ծանօթ ժամագործի մը միջոցաւ:

ԳԻՆԵՐԸ ԽԻՍՏ ԶԱՓԱԻՈՐ

21-50

ՏՕՐՔՕՐ ԺՈՐժ Փ. ԷՎԼԻԵԱՆ

ԱՄԵՐԻԿԵԱՆ ԱՏԱՄԱՐՈՅԺ Ապսիմ, Շարէ Բուլպի, թիւ 55

Կը պատրաստէ ամեն բերաններու եւ հասակի յարմար ընտիր ապրանքներով կեղծ ակռաներ:

Կը դադրեցնէ վայրկեանապէս ակռայի ցաւերը ամերիկեան նորագոյն մեթոտով իւր պատրաստած դեղերով:

Կը բուժէ յինտերու եւ բերնի ամեն տեսակ հիւանդութիւններն:

Իր ընցուցած ակռաներուն տոկունութիւնն առ նուազն երկու տարուան համար կ'երաշխաւորէ: 10-10

ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱՂԱՐԵԱՆ

ԱՊՏԻՆ ԿՈՇԿԱԿԱՐ ԱՊՏԻՆ

Տայիտի Սանիթի ճիւղ գիմաց

Ամենաբնորոք ապրանքներէ կը պատրաստէ խիստ կոկիկ, հաստատուն եւ ճաշակաւոր կոչիկներ, արանց, կանանց եւ տղայոց համար:

Գիները չափաւոր եւ աժան: Փորձ մը միայն կը բաւէ: 13-24

ՏՊԱՐԱՆ-ԿԱԶՄԱՏՈՒՆ ԵՒ ԹՂԹԱՎԱՋԱՄԱՏՈՒՆ

Ի Գ.Ա.ՀԻՐԷ ՇԱՐԱ ՄՕՉԱՄԵՏ ԱԼԻ (ՀԱՊՊԱՆԻՅԷ)

Ս. ԴԱՐԲԻՆԵԱՆ պատիւ ունի յայտարարելու թէ, յետ այսու ամէն օր առաւօտեան ժամը 7 էն մինչեւ երեկոյեան ժամը 8ը, պիտի գտնուի իւր Տպարանին մէջ եւ պիտի ընդունի ամէն լեզուէ տպագրական ամեն կարգի եւ տեսակի յանձնարարութիւններ. ինչպէս՝

Շրջաբերականներ, Մահազդեր, Հրատարակներ, Այցեխարտեր, Գրքեր, Տեղեկագրեր, Հաշուեցոյցներ, Կանոնագրեր, Տուներ, Բնկերութեանց եւ վաճառականներու սպագրական ամեն պիտոյցներ:

Իւր տպարանին մէջ եկած նորանոր կարգազրուածանց շնորհիւ կը խոստանայ յաճախորդները ըստ ամենայնի գոհացնել գործերու մաքրութեան, ճշգրտապահութեան եւ գներու չափաւորութեան մէջ:

Եզրպտոսի ու է քաղաքէն կամ գիւղէն եկած յանձնարարութիւնները ամենայն խնամք եւ փութով կը կատարուին:

Տպագրութիւն Ս. Ա. ԴԱՐԲԻՆԵԱՆ

ԳՐԻԳՈՐ ՊԵՇԵՐԵԱՆ

ԿՈՇԿԱԿԱՐ

Պապար Մուրուր Թիւ 39

Պատիւ ունի ծանուցանել թէ, իւր խանութը Շարա Միւլէյինէն փոխադրած է Ի Պապար Մուրուր Գրանտական նորաձեւութեանց յար եւ նրման կոչիկներ պատրաստելու մէջ իւր ունեցած հմտութեամբ մինչեւ ցարդ գոհ ըրած է իրեն դիմող Պատ. յաճախորդներն:

Իւր գործածած ապրանքներու տոկունութիւնն երբէք տարակոյս չ'վերցնեն:

Իրեն եղած յանձնարարութիւնք ո'չ միայն չափաւոր գներով, այլ եւ փութով եւ մեծ խնամով կը պատրաստուին:

Դիմեցէք, եթէ կ'ուզէք ճաշակաւոր հագնիլ եւ կոշտերէ (նասրը) ազատ մնալ: 16-24

Հ. ԱԶԱՏԵԱՆ

ՂՈՒՐՐԻԷ, ՎԷՔԱԼԷԹ-ԷԼ-ԱՍԱՊԻ ԿԻՑ

Կը ծախուի ընտիր տեսակէն մազի ներկ (րաստըզ) սեւ, շագանակագոյն եւ ոսկեգոյն: Սեւ ներկ շիշով վայրկեանապէս սեւցնող: Սոյն ներկերու տեւողութիւնը մէկ ու կէս ամսուայ համար երաշխաւորեալ է:

ՀՐԱՇԱԼԻ ԶՈՒՐ ՄԸ

Հերթափութիւնը կը դադրեցնէ եւ մազերը կը ճոխացնէ: Նմանապէս ճաղատ (տաղ) գլուխները մազ կը բերէ. 17 տարուան ճաղատ գլուխներու վրայ փորձուած եւ հիւանալի արդիւնք տեսնուած է: Ծիլը 8 դրոյ (2 ֆրանք):

Ճերմկցնող չուր շիշով, որը մարմնոյն բնական սպիտակութիւն կուտայ առանց զգացնելու: Եզրպտոսի մէջ միակը:

Ակռայի փոշի եւ շուր. մին մաքուր եւ ճերմակ, միւսը հիւանդութիւններէ զերծ պահող եւ ամրացնող:

Թող փութան օգտուիլ այն անձինք՝ որոնց գլխու մազերն սկսած են տակաւ առ տակաւ թափիլ եւ օր մը ճաղատ ըլլալու վտանգին ենթարկուած են:

Կը գնենք, կը վաճառենք եւ կը փոխանակենք բոլոր ազգաց գործածած նամակադրոշմները: 3 1-8

Le Gérant Dr S. A. HAGOPIAN